ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2024/99

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
26 մարտի 2024 թ. N 99

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Շահումյան-12

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2024թ.մարտի 26-ին քննարկեց Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջի (այսուհետ՝ հաստատություն,ԳՏՊՔ, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	13 **հունվարի** 2023թ.
ինքնավերլուծության ներկայացում	5 մայիսի 2023 թ.
փորձագիտական այցի իրականացում	18-21 սեպտեմբերի 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	12 դեկտեմբերի 2023 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	20 հունվարի 2024թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 4-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայնացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **Առկա են որոշակի խնդիրներ որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, սակայն առկա են նաև առաջխաղացման միտումներ և օրինակներ**

Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջում իրականացվող ՄԿԾ-ները համապատասխանում են առաքելությանը և ՈԱԾ-ի 4-րդ ու 5-րդ մակարդակներին: Կրթական ծրագրերը հնարավորինս նպատակաուղղված են աշխատաշուկայի պահանջների բավարարմանը, հաշվի են առնված նաև աշխատաշուկայում միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների զբաղվածության առանձնահատկությունները:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման գործընթացը քոլեջի ռազմավարական ծրագրի խնդիրներից մեկն է: Քոլեջը մշակել է դասավանդման և ուսումնառության մեթոդներ, որոնք սակայն համակարգված բնույթ չունեն և տարանջատված չեն՝ ըստ առանձին կրթական ծրագրերի: Մեթոդների ընտրությունն իրականացնում են դասախոսները՝ իրենց փորձից ելնելով, կիրառելով ինտերակտիվ և ուսանողակենտրոն ուսուցման մեթոդներ: Կիրառվում են ուսանողների գիտելիքները և կարողությունները զարգացնող ուսուցման ձևեր, հանձնարարականներ, սակայն դեռևս անկատար են պրակտիկ և վերլուծական կարողությունները երաշխավորող մեթոդները: ԳՏՊՔ-ն ունի գիտելիքի գնահատման սահմանված մոտեցումներ: Դասավանդման որակի բարելավման նպատակով ամբիոնի վարիչներն իրականացնում են դասալսումներ, իրականացվում են նաև դասախոսների միջև փոխադարձ դասալսումներ:

Քոլեջը հիմնականում ապահովված է դասախոսական անձնակազմով: Քոլեջն ունի դասախոսների և ՈւՕ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր: Դասախոսական անձնակազմին ներկայացվող առանձին պահանջներ սահմանված չեն, դասախոսական կազմի ընտրության ժամանակ առաջնորդվում են ՊԿՁ-ներով ներկայացված պահանջներով: Քոլեջը, պայմանավորված տարածաշրջանում մասնագետների պակասով,

երբեմն ունենում է դասախոսների կարիք որոշ նեղ մասնագիտական առարկաների մասով: Դասախոսական կազմում առկա են ինչպես փորձառու, այնպես էլ երիտասարդ կադրեր, ներգրավված են նաև տվյալ մասնագիտտական ոլորտի պրակտիկ մասնագետներ: Առկա չեն դասախոսների կայունությունն ապահովող հստակ մեխանիզմներ, սակայն ունեն դասախոսների որոշակի ռեզերվ:
ԳՏՊՔ-ն ջանքեր է գործադրում ռեսուրսների բարելավման և դրանց նորացման ուղղությամբ: Տնտեսումների հաշվին վերանորոգման աշխատանքներ են իրականացվել նախնական (արհեստագործական) կրթության իրականացման համար նախատեսված մասնաշենքում: Քոլեջը նաև օգտագործում է գործատուների ռեսուրսները պրակտիկաների իրականացման նպատակով:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում է, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը***

ԳՏՊՔ-ն ունի 2020-2025թթ.-ի Ռազմավարական ծրագիր, այն արտահայտում է իր հիմնական նպատակները, որոնք համահունչ են ՈԱԾ-ին: Կարևորված են ներքին և արտաքին շահակիցների կարիքները: ՌԾ-ն դեռևս չի վերածվել գործառնական փաստաթղթի, առկա չեն դրա իրականացման ընթացիկ գնահատումները: Ռազմավարական կառավարումը ներկա վիճակով ամբողջությամբ չի իրականացվում գնահատման առանցքային ցուցանիշների և արդյունավետության ցուցիչների հիման վրա: Կառավարչական որոշումների կայացմանը դեռևս լիարժեք և գործուն մասնակցություն չեն ունենում ներքին շահակիցները: Հստակ չէ ռազմավարական պլանավորման և իրականացվող գործընթացների փոխկապակցվածությունը, բացակայում են ՌԾ գնահատման մեխանիզմները: Առկա չեն քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների համակողմանի ուսումնասիրություններ: Փաստաթղթերի և գործընթացների կառավարումը դեռևս հենված չէ որակի կառավարման սկզբունքի վրա, առկա չեն գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կիրառման մեխանիզմներ:
Քոլեջը կարևորում է որակի ապահովման գործընթացները, ինչն ընդգծված է 2022-2027 թթ.-ի ՌԾ-ում, մշակվել է որոշակի փաստաթղթային հենք: Որակի ապահովման ներքին համակարգը դեռևս լիարժեք ներդրված չէ, հստակ արտահայտված չէ որակի ապահովման կենտրոնի դերը: Առկա են որոշ մեխանիզմներ որոնք թույլ են տալիս ներքին և արտաքին շահակիցների որոշ շրջանակին ներգավել որակի ապահովման գործընթացներում: Որակի ապահովման համակարգը դեռևս ձևավորման փուլում է:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը***

ԳՏՊՔ-ում առկա են ուսանողների ընդունելության և հավաքագրման մեխանիզմներ: Ուսանողները ցանկացած ժամանակ կարող են դիմել վարչական անձնակազմին: Իրականացվում են որոշ խորհրդատվական և ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Քոլեջում ձևավորված հետազոտական և ստեղծագործական միջավայրը դեռևս բավարար պայմաններ չի ստեղծում ակնկալվող արդյունքներին հասնելու համար:
ՄՈՒՀ-ը կարևորում է արտաքին կապերի զարգացումը և հզորացումը, սակայն քոլեջը չունի արտաքին կապերի զարգացման քաղաքականություն, ընթացակարգեր:

Քոլեջն ունի համագործակցության պայմանագրեր ու հուշագրեր մի շարք տեղական կազմակերպությունների հետ հիմնականում պրակտիկաների անցկացման համար: Քոլեջն ընդգրկված է Եվրամիության կողմից միջին մասնագիտական կրթությանն ուղղված բյուջետային աջակցության ծրագրում, որի շրջանակում բարելավել է իր ռեսուրսային բազան: Չկա միջազգային այլ կապեր և մասնագիտական համագործակցություններ:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային են որակավորորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, միաժամանակ հիմքեր ստեղծված են բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայնացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

3. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - նախապես հավաքագրված և վերլուծված տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը,
   - դասախոսական կազմի դասավանդման արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմների կիրառմանը,
   - դասախոսական և ՈւՕ կազմերի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների վերանայմանը և նեղ պրակտիկ ոլորտի մասնագետների ներգրավմանը,
   - գործատու-գործընկերների հետ համագործակցությանը՝ նրանց ռեսուրսները համատեղ հետազոտական նպատակներով օգտագործելու համար,
   - հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցմանը, գործնական հմտությունների ձևավորրմանը,
   - ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը,
   - ներքին և արտաքին շահակիցների նկատմամբ հաշվետվողականության համակարգի բարելավմանը,
   - որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացմանը, քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը:

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2024 թ. մարտի 26
ք.Երևան